

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՐՏԱՎԻՍԱ ԽՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

XIX դարի 80-ական թթ. սեգոնային արտագնացությունը դարձել է Դայաստանի լեռնային և նախալեռնային մի շարք շրջանների գյուղական բնակչության բնութագրից կողմերից մեկը և նրանց եկամուտների ծևավորնան կարևորագույն աղբյուրը: Այդ գործընթացի մեխանիզմների բացահայտման և հետագա կարգավորման գործում մի շարք միջոցառումների մշակման համար էական նշանակություն ունի արտագնա խմբերի ծևավորնան և տիպարանացման, սոցիալ-մասնագիտական կազմի, կրթական մակարդակի, ուղղվածության և այլ հարցերի պարզաբանումը:

Ըստ էրնոսոցհիլոգիական հետազոտության արդյունքների՝ արտագնացությանը մասնակցում են տարբեր սեռատարիքային խմբեր: Նրանց 91%-ը 18-ից մինչև 50 և ավելի տարիքի աշխատունակ տղանարդիկ են, իսկ 9%-ը՝ կանայք, որոնք ընդմիջումներով կամ առանց ընդմիջումների մեկնել են արտագնա աշխատանքի: Նշենք, որ անցկացված էրնոսոցհիլոգիական հետազոտության մեջ արտագնացները բաժանված էին 18-29, 30-49, 50 և ավելի տարիքային խմբերով: Նրանց տարիքային առանձնահատկությունները ոչ միայն համարվում են կարևոր ժողովրդագրական ցուցիչներ, այլև ունեն առավել լայն սոցիալական բովանդակություն այն առօսով, որ նշված խմբերից յուրաքանչյուրը տարբեր սերնդի ներկայացուցիչներ են՝ որոշակի պատճական ժամանակաշրջանի իրադարձությունների կրողներ: Ինչպես երևում է 13-րդ աղյուսակից, այդ խմբերի ընդհանուր բնութագրնան համար տարիքային առանձնահատկությունների հետ կարևոր նշանակություն ունի նաև արտագնա վայրում աշխատանքի տևողությունը: Ըստ

տարիքային կազմի՝ այն ցուցաբերում է որոշակի աճման կամ նվազման միտում: Վերը նշվածը ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք 18-29 և 50 և բարձր տարիքային խմբերի արտագնա վայրում աշխատանքային տարիները<sup>1</sup>:

18-29 տարեկանների մեծ մասը իրենց արտագնա աշխատանքային գործունեությունը սկսում են գինվորական ծառայությունից, իսկ որոշ մասը՝ հանցարարական դպրոցն ավարտելուց հետո: Ըստ աղյուսակի տվյալների՝ նրանց 43%-ն ունի 1-3, 36%-ը՝ 3-6, 15%-ը՝ 6-10, 4%-ը՝ 10-ից բարձր տարիների արտագնացության ստաժ: Տարիքային այս խումբն ապրում է հոգևոր և նյութական պահանջմունքների ծևավորման և դրա բավարարման ակտիվ շրջան: Նրանք աչքի են ընկնում իրենց բարձր սոցիալական շարժունությամբ:

Երրորդ խմբում արտագնացությունը ծեռք է բերել սովորույթի ուժը: Արտագնացության մեկնելով 1960-ական թվականներից՝ նրանց 43%-ն ուներ 10-ից ավելի (հաճախ նաև՝ 20-25) տարիների արտագնա աշխատանքային վլործ: Իրենց բարեխիդր և լավ աշխատանքի համար նրանցից ոմանք արտագնա աշխատանքի վայրում պարգևատրվել են պատվոգրերով: 30-49 տարիքային իրումը 10-ից բարձր տարվա արտագնացության ստաժով, համեմատած վերը քննարկված երկու խմբերի հետ, գրավում է միջին դիրք՝ 17%: Ընդհանուր առմամբ, նշված րուրու տարիքային խմբերի համար, որոնք հիմնականում համալրվում են գյուղական բնակչությունից, բնու-

<sup>1</sup> Այս և եեագա 14-23, 31-33, 35-57 աղյուսակներում բերված տվյալները եաշվարկվել են 1987թ. իրականացված էրնոսոցհիլոգիական հետագործության աղյունքների հիման վրա:

թագրական են մոնուքնիկ միջավայր<sup>1</sup> և սոցիալական ենթակառուցվածքի զարգացման տարբեր մակարդակները:

**Աղյուսակ 13**  
**Արտագնացության տևողությունը՝ ըստ տարիքային կազմի (%-ով)**

Տարիքային կազմը	Արտագնացության տարիները				Դելտապատճեն պատասխանի ենթակառությունը	Ընդամենը
	1-3 տարի	3-6 տարի	6-10 տարի	10-ից բարձր		
18-29	43	36	15	4	2	100
30-49	20	27	33	17	3	100
50 և րարձու	15	19	21	43	2	100
Ընդամենը	26	27,2	23	21,2	2,6	100

Պատմականորեն որոշակի փոփոխություններ են նկատվում արտագնացների կազմում այն առումով, որ այդ գործընթացին մասնակցում են նաև կանայք: Եթե XIX դարում, պայմանավորված հայ ժողովողի ավանդույթներով և ընտանիքում կանանց կարգավիճակով և գրադեցրած դերերով, նրանք գրեթե չեն մեկնել արտագնացության՝ տարիներ շարունակ համբերությամբ սպասելով օտարությունից անուսինների վերադարձին, ապա քննարկ-վելիք ժամանակահատվածում նրանց մասնակցությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով<sup>2</sup>: Նախ աշխատանքի վայրում արտագնացների համար կենցաղային տարրական պայմանների բացակայությունը՝

<sup>1</sup> Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979г., М., 1984, с. 84.

<sup>2</sup> Կանանց մասնակցությունը արագանացությանը փոքր էր նաև XX դարի 60-ական թթ., որը ամենից առաջ պայմանավորված էր երևութիւն վերաբերյալ առաջացած բացասական հասարակական նարծիքով: Տարեց մարդկանց հետագա անցկացությունը պարզվեց, որ այդ տարիներին արտագնացությունը և ընտանիքի քայլայումն ընկալվել են որպես խիստ փոխկապակցված երևույթներ: Այդ հսկ պատճառով նույնիսկ տղամարդիկ արտագնացության են մեկնել աննկատ կերպով, իսկ նրա ընտանիքի անդամները որոշ ժամանակ գաղտնի են պահել նրա ուցակայությունը: Արտագնացության զանգվածային ընույթը և արժեքային կողմնորոշման փոփոխությունները այդ շրջանում հանգեցրել են այն րանին, որ նրանց հարազատները արտագնացության մեկնելուց առաջ նույնիսկ հավաքվում և դարձ ճանապարհ են մաթում, իսկ վերադառնալուց հետո՝ աշքալուսանք աալիս:

հատկապես հասարակական ճաշարան-ներում սննդի տեսականու և որակի ոչ բարկաք վիճակը, որից դժգոհություն է հայտնել նրանց 83%-ը: «Որո՞նք են արտագնացությանը մասնակցելու պատճառները» հարցին տրված պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ արտագնացությունը կանանց համար չի ծառայում եկամուտների ծեռքբերման աղբյուր, այլ հիմնականում նպատակ է հետապնդում հոգալ ամուսինների կենցաղային հարցերը, նրանց համար պատրաստել ազգային ճաշատեսակներ, որի կարիքը շատ են գգում նրանք: Խմբի անդամների ցանկությամբ և համաձայնությամբ կանանց որոշ մասը վճարման սկզբունքով հաճախ ազգային ճաշատեսակներ է պատրաստում բոլորի համար<sup>3</sup>: Սովորաբար այդ աշխատանքները կատարում է խմբի բոլիգադիրի կամ էլ նրա անդամներից որևէ մեկի կինը: Կապված այն բանի հետ, թե տեղում ինչպես են լուծվում երեխաներին խմանելու և անձնական օժանդակ տնտեսությունը վարելու հարցերը, կանանց որոշ մասն այնտեղ մնում է երկու-երեք ամիս, մյուսները՝ որոշ սեզոնի ընթացքում: Դիտարկումները ցույց են տալիս, որ նրանց թվաքանակը մեծ է 18-29 և 50 ու ավելի տարիքային խմբներում: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ առաջին խմբում կանայք, ունենալով նախադպրոցական հասակի երեխաներ, վերջիններիս տանում են իրենց հետ, իսկ երրորդ տարիքային խմբում կանայք ազատ են նման հոգսերից:

Անուսինների հետ կանանց մասնակցությունը արտագնացությանը միաժամանակ նպաստում է կայուն րնտանիք ունենալուն և ամրապնդում է նրա հիմքերը: Նման ընտանիքներում չի նկատվում բարոյական արժեքների անկում:

Արտագնացությանը մասնակցող տղամարդիկ և կանայք ունեն տարբեր կրթական մակարդակ: Այն որոշակի ազբեցություն է թողնում ոչ միայն անհատի շարժունության, այլև նրա սոցիալական դիրքի և մասնագիտական

<sup>3</sup> Գալստյան Մ., Սեզոնային արտագնացության եիմնական գործոնները Յայկական ԽՍՀ-ում (ըստ էրնստիլոգիական հետազոտության նյութերի), ԼՀԳ, N4, Ե., 1988, էջ 48:

պատրաստականության վոա. «Կրթական մակարդակոց մեծապես կախված են մարդկանց կյանքի պայմանները: Դարձը այն է. որ կրթությունը հնարավորություն է տալիս ավելի որակյալ և հետևաբար ավելի բարձր վարձատրվող աշխատանք ունենալու: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն հավասարապես ազդելու մարդկանց կյանքի պայմանների, այլև անմիջականորեն ազդում է մշակույթի յուրացման վարքագծի և մշակութի ոլորտի վոա»<sup>1</sup>:

Ստորև բերված աղյուսակից երևում է, որ ըստ տարիքային կազմի՝ նրանց կրթական մակարդակների միջև գոյություն ունեն որոշակի տարրերություններ, որոնք պայմանավորված են ժամանակաշրջանի առանձնահատկություններով: Օրինակ՝ մինչև 7-րդ դասարանի կրթություն ունեն ավելի սերնդին պատկանող արտագնացների 49%-ը, 8-ամյա՝ 20%-ը, իսկ լրիվ միջնակարգ՝ 16%-ը: Այս իմրդի մարդիկ իրենց դպրոցական ուսուցումը սկսել են նախապատերագմյան ժամանակաշրջանում, երբ համրապետությունում 1930-ական թվականների առաջին կեսին իրականացվեց ընդհանուր տարրական, իսկ երկրորդ կեսին՝ յոթնամյա պարտադիր ուսուցում<sup>2</sup>:

Երկրորդ սերնդի դպրոցական ուսուցումի համընկնում է հետպատերագմյան ժամանակաշրջանին, երբ 7-ամյայի հետ 1958 թվականից անցան նաև 8-ամյա պարտադիր կրթության: Վերջինս նրանց մոտ կազմում էր 40%: Նշված երկու իմրերի մոտ լրիվ միջնակարգ կրթությամի արտագնացները կամում են համեմատարար ցածր տոկոս (16%, 20%): Արտագնացների կրտսեր սերնդի մոտ կտրուկ կերպով փոխվել էր այդ պատկերը: Նրանց միայն 1%-ն ունի մինչև յոթնամյա, 10%-ը՝ 8-ամյա, իսկ 60%-ը՝ լրիվ միջնակարգ

<sup>1</sup> Опыт этносоциологического исследования образа жизни (по материалам Молдавской ССР), М., 1980, с. 130.

<sup>2</sup> 1936թ. Հայաստանում գործում էր 1147 դպրոց, որանու սովորում էր 213,5 հազ. աշակերտ (տես՝ Հայկական Սովորական եամրագիւրան. Ե., 1980, հ. 6, էջ 7-8): 1939թ. գրագիւտ էր եամարվում 9-49 տարեկան գյուղական բնակչության 80,1%-ը: Հայաստանում 1979թ., Ե., 1980, ս. 35.

կրթություն: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ լրիվ միջնակարգ կրթությունը դարձել էր ուսուցման պարտադիր ծև: Բոլոր տարիքային իմբերից արտագնացությանը մասնակցած ՊՏԸՒ-ներ, տեհամիկրուներ ավարտածների թվաքանակը կազմել է 14-22%: Ըստ հետագութության արդյունքների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած անձանց թվաքանակը փոքր էր. 18-29 տարիքային իմբում այն կազմել էր 7%, 30-49-ում՝ 4%, իսկ 50 և ավելի տարիքային իմբում՝ 1%: Վերջիններիս մեծ մասը ինժեներատեխնիկական, իսկ որոշ մասը՝ հումանիտար կրթության ներկայացուցիչներ էին: Նրանց համար շարժումնության կարևոր իրան էին ինչպես տեղում համապատասիւան աշխատանքի բացակայությունը, այնպես էլ ցածր աշխատավարձը:

Աղյուսակ 14  
Արագնացների կրթական մակարդակը՝ ըստ տարիքային կազմի (%-ում)

Տարիքային կազմի մեջ 7-ընթիւնական դպրոցության մասնակիւտ	Մասնակիւտ 7-ընթիւնական դպրոցության մասնակիւտ						
18-29	1	10	60	22	7	1	100
30-49	15	40	20	18	4	2	100
50 և ավելի	49	20	16	14	1	-	100
Ընդամենը	21,6	23,4	32	18	4	1	100

Համրապետության ժողովողական տնտեսության համար որակյալ մասնագետների պատրաստման գործում կարևոր դեր են կատարում ՊՏԸՒ-ները:

Աղյուսակ 15-ից երևում է, որ տասնինգ տարվա ընթացքում հանրապետությունում պրոֆ. տեխ. հաստատությունների թիվը 55-ից հասել է 101-ի, իսկ շրջանավարտներինը՝ 15 հագարից մինչև 30-35 հագար մարդու: Անշուշտ, վերը նշվածը հիմք էր նաև արտագնացությանը մասնակցող տարրեր սոցիալ-մասնագիտական իմբերի կազմավորման համար:

**Աղյուսակ 15**  
**ՊՏԾՒ-ՆԵՐԻ և ՌՈԱՆԸ ՉՐՉԱՆԱՎԱՐՄԱՆՆԵՐԻ**  
**ՔԻՎԸ 1970-1985 թթ.**

Դարեր	Կազմակերպություն	Կազմակերպություն	(Ամբողջ եռակա միավոր) միավոր	Կազմակերպություն	(Ամբողջ եռակա միավոր) միավոր	Համարժեք ուղարկություն	Համարժեք ուղարկություն
1970	56	20,1	17,1	15,0			
1975	80	36,0	26,2	21,7			
1980	100	53,1	39,0	33,2			
1981	101	51,0	36,3	34,7			
1982	101	50,7	36,0	34,0			
1983	101	50,8	36,9	34,1			
1984	99	49,8	36,8	35,4			
1985	101	47,0	32,1	30,0			
Այդ թվում՝ ցերեկային միջն. պրոֆ. տեխ.	94	40,7	24,8	23,3			
ուսումնա- ռանուններ, երեկոյան միջն. պրոֆ. տեխ.	7	6,3	7,3	6,7			
ուսումնա- ռանուններ							

Նրանց մասին որոշակի պատկերացում ենք կազմում աղյուսակ 16-ից:

Աղյուսակից երևում է, որ արտագնացությանը մասնակցում են սոցիալ-մասնագիտական իմբերում տեղի են ունեցել որակական ու քանակական փոփոխություններ: Օրինակ՝ որակավորում չունեցող աշխատողների մոտ այն ուղեկցվում էր ուղղահայաց շարժունությամբ՝ նոր մասնագիտությունների ձեռքբերմամբ: Այդ էր վեայում այն փաստը, որ նրանց թիվը կրծատվել է 3.6%-ով: Նույն գործընթացն է նկատվում նաև ծառայողների և բարձր որակավորման

**Առաջին՝** ոչ ինդուստրիալ ոլորտի որակավորում ունեցող ֆիզիկական աշխատողներ՝ ծեփագործ, հյուսն, ատաղձագործ, պատշար, բետոնագործ՝ 50%:

**Երկրորդ՝** ինդուստրիալ ոլորտի որակավորում ունեցող ֆիզիկական աշխատողներ՝ մեխանիզատոր, բուլղոզերավար, վարորդ, էլեկտրիկ, եռակցող՝ 31%:

**Երրորդ՝** որակավորում չունեցող ֆիզիկական աշխատողներ՝ 6.4%:

**Չորրորդ՝** ծառայողներ՝ 6.3%:

<sup>1</sup> Народное хозяйство Армянской ССР в 1985г. (Статистический ежегодник), Е., 1986, с. 217.

**Հինգերորդ՝** բարձր որակավորում ունեցող մտավորականներ՝ 3.7%:

Արտագնացների շրջանում առաջին երկու սոցիալ-մասնագիտական իմբերի գերակշռությունը առաջին եերթին պայմանավորված էր շինարարության ոլորտում լայն պահանջարկ ունեցող նշված մասնագիտություններով, շինարարական աշխատանքների ծավալներով և աշխատանքների կատարման սեղմ ժամկետներով:

Վիճակագրական տվյալներից կարելի է եզրակացնել նաև, որ այդ գործընթացին մասնակցել են ծառայողներ և բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատողներ, ինչը վկայում է այդ ոլորտներից նրանց արտահոսքի մասին: Դիտարկումները ցույց են տալիս նաև, որ այդ ոլորտների մասնագետների որոշ մասը արտագնացության է մեկնել աշխատանքային արձակուրդների ընթացքում:

Աղյուսակ 17-ից երևում է, որ մի քանի սեզոն արտագնացության մեկնելուց հետո վերը նշված սոցիալ-մասնագիտական իմբերում տեղի են ունեցել որակական ու քանակական փոփոխություններ: Օրինակ՝ որակավորում չունեցող աշխատողների մոտ այն ուղեկցվում էր ուղղահայաց շարժունությամբ՝ նոր մասնագիտությունների ձեռքբերմամբ: Այդ էր վեայում այն փաստը, որ նրանց թիվը կրծատվել է 3.6%-ով: Նույն գործընթացն է նկատվում նաև ծառայողների և բարձր որակավորման

**Աղյուսակ 16**  
**Արտագնացների սոցիալ-մասնագիտական**  
**կազմը՝ ըստ տարիքի (%)-ով)**

Տարիքի դիրքականացում	Ադրբեյջանի դրամ գնումների պարագաներ	Ամերիկյան դրամ գնումների պարագաներ					
18-29	2	39	28	9	8	3	100
30-49	10	50	26	10	3	2	100
50 և ավելի	7	61	29	-	-	3	100
Ընդհանուր	6,4	50	31	6,3	3,7	2,6	100

Սոցիալ-մասնագիտական կազմը մինչև  
արտագնացության մեջնելը և դրանից հետո՝ ըստ  
տարիքային խմբերի (%-ով)

Մրտագնացների տարիքային կազմը	18- 29	30- 49	50 և ավելի	Ընդամենը
Որակավորում չունեցող ֆիզիկական աշխատողներ	Մինչև մեկնելը	2	10	7
	Մեկն. հետո	2	5	4
Ոչ ինդուստրիալ պրոֆիլի որակավորում ունեցող ֆիզ.աշխ.	Մինչև մեկնելը	39	50	61
	Մեկն. հետո	54	58	61
Ինդուստրիալ պրոֆիլի որակավորում ունեցող ֆիզ. աշխատողներ	Մինչև մեկնելը	38	26	29
	Մեկն. հետո	28	31	33
Ծառայողներ	Մինչև մեկնելը	9	10	0
	Մեկն. հետո	10	3	1
Բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատողներ	Մինչև մեկնելը	8	3	0
	Մեկն. հետո	3	2	1
Դժվարացել են պատասխանել	Մինչև մեկնելը	3	1	3
	Մեկն. հետո	2	2	1

մտավոր աշխատողների մոտ, որոնց հաշվին համարյա բոլոր տարիքային խմբերում ավելացել է ինդուստրիալ և ոչ ինդուստրիալ ոլորտի արտագնացների թվաքանակը: Ընդհանրապես, արտագնացները աչքի են ընկնում շինարարական մասնագիտությունների տիրապետման րագմակողմանիությամբ: Նրանցից յուրաքանչյուրը հմտացել էր միջին հաշվով 2-3, նույնիսկ 4 մասնագիտություններում: Օրինակ՝ պատշաճը կարողանում է կատարել բետոնագործի, հյուսնի, ատաղձագործի աշխատանքներ: Շինարարական մասնագիտությունների օճով արտագնացների բարձր որակավորման մասին նշում է նաև Մ.Վ. Շարանվասն. «Փորձագետների մեջ մասը դրական է բնութագրում սեգոնային շինարարական

խմբերի որակական կազմը: Խսկապես, մեր հետագոտությունը ցույց տվեց, որ այդ աշխատանքային խմբերի համար բնորոշ է համընդիհանուր բարձր մակարդակ՝ ավանդական շինարարական մասնագիտությունների տիրապետման ոլորտում: Հարցման պահին շինարարական մասնագիտությունների միջին թվաքանակը կազմել է 4.2: Հարցվածների 59%-ը շինարարի մասնագիտությունը նշել էին որպես հիմնական, ընդ որում, 36%-ի համար՝ այն համարվում է միակը»<sup>1</sup>:

Շինարարական աշխատանքների համատեղումը հատկապես ինտենսիվորեն է տեղի ունենում այն արտագնացների մոտ, ովքեր ունեն 6-ից բարձր տարիմերի արտագնափորձ:

Որպես բնակչության տարածքային շարժումների ծև արտագնացության ընթացքում նոր մասնագիտությունների ծեղքերումը հետագայում հնարավորություն էր տալիս անհատներին փոխել իրենց աշխատանքի բնույթը և դրա կիրառման ոլորտները<sup>2</sup>: Այն նպաստում է գյուղական բնակչության սոցիալական շերտերի փոփոխությանը, ինչպես նաև որակյալ կադրերի վերարտադրությանը: Ելենլով դրանից՝ արտագնացների ճնշող մեծամասնությունը (62.7%) այդ ագդեցությունը դրական է գնահատել: Այդ գործընթացը իր ագդեցությունը ունեցավ նրանց սոցիալ-մասնագիտական որակավորման վոա (տես աղ. 18-ը):

Արտագնացների մոտ մի շաբթ մասնագիտությունների տիրապետումը ազդում էր արտագնա խմբի չափերի վոա: Նրանց թվաքանակը տատանվում էր 3-ից մինչև 8 անդամների սահմաններում: Եթե խմբի բոլոր անդամները բարձր որակավորում ունեցող շինարարներ էին և միաժամանակ կարողանում էին համատեղել մի քանի մասնագիտություն, ապա նման խմբերը սովորաբար բաղկացած

<sup>1</sup> Շաբանովա Մ.Ա., Սезонные строители в Сибирском селе, Известия Сибирского отделения АН СССР, Экономика и прикладная социология, N7, вып. 2, 1986, с.49.

<sup>2</sup> Տես Գալստյան Մ., Անգոնային միգրացիայի սոցիալ-մշակութային հետևանքները Հայկական ՍՍՀ-ում, Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանսի գեկուցումների թեզիներ, Ե., 1988, էջ 12-13:

էրն 3-4 անդամներից: Այն խմբերը, որտեղ որակավորում ունեցող մասնագետների հետ ընդգրկվում էրն նաև որակավորում չունեցողները կամ մտավոր աշխատանքով գրադարձող մարդիկ, որոնք նույնպես չունեին համապատասխան մասնագիտություն, բայց կացած էրն 5-8 անդամից: Անշուշտ, նշված երկու դեպքում էլ կարևոր նշանակություն ունեն նաև կատարվող շինարարական աշխատանքների ժավալը և ոլորտը: Այդ խմբերի կազմակորման գործում կարևոր դեր են կատարել միջանձային սերտ հարաբերությունները. ագգակցական և դրացիական կապերը, աշխատանքայի կոլեկտիվները, ընկերական հարաբերությունները: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունից պարզվել է, որ վերը նշված ոլորտները չունեն միևնույն նշանակությունը այդ խմբերի կազմակորման գործում: Այդ են վեայում աղյուսակ 19-ում բերված տվյալները:

#### Աղյուսակ 18 Արտագնացների գնահատականը՝ ըստ մասնագիտության և տարիքային կազմի (%-ով)

Մասնագիտության վիճակը ունեցած ազդեցությունը	Տարիքային կազմը			Ընդամենը
	18-29	30-49	50 և ավելի	
Դրականորեն է ազդում	63	65	60	62,7
Բացասարար է ազդում	11	3	3	5,7
Չի ազդում	25	31	35	30,3
Դժվարացել են պատասխանել	1	1	2	1,3
Ընդամենը	100	100	100	100

Արտագնացների մոտ մի շարք մասնագիտությունների տիրապետումը ագդում էր արտագնա խմբի չափերի վիճակը Նրանց թվաքանակը տատանվում էր 3-ից մինչև 8 անդամների սահմաններում: Եթե խմբի բոլոր անդամները բարձր որակավորում ունեցող շինարարներ էրն և միաժամանակ կարողանում էրն համատեղել մի քանի մասնագիտություն, ապա նման խմբերը սովորաբար բայց կացած էրն 3-4 անդամներից: Այն խմբերը, որտեղ որակավորում ունեցող մասնագետների հետ ընդգրկվում էրն նաև որակավորում չունեցողները կամ մտավոր աշխատանքով գրադարձող մարդիկ, որոնք նույնպես չունեին համապատասխան մասնագիտություն, բայց կացած

էրն 5-8 անդամից: Անշուշտ, նշված երկու դեպքում էլ կարևոր նշանակություն ունեն նաև կատարվող շինարարական աշխատանքների ժավալը և ոլորտը: Այդ խմբերի կազմակորման գործում կարևոր դեր են կատարել միջանձային սերտ հարաբերությունները. ագգակցական և դրացիական կապերը, աշխատանքայի կոլեկտիվները, ընկերական հարաբերությունները: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունից պարզվել է, որ վերը նշված ոլորտները չունեն միևնույն նշանակությունը այդ խմբերի կազմակորման գործում: Այդ են վկայում աղյուսակ 19-ում բերված տվյալները:

Այդ աղյուսակը ցույց է տալիս, որ ծանոթներից և հարևաններից համալրված խմբերը կազմում են 32.3%-ը, հարազատներից և բարեկամներից համալրվածները՝ համապատասխանարար 24.7% և 25%: Այդ խմբերի գործառնությունը պայմանավորված էր մի շարք գործոններով: Ծանոթների և ընկերների հետ մեկնողները, որը բարձր տոկոս է կազմել գրեթե բոլոր տարիքային խմբերում, գերադասում են այնպիսի կոլեկտիվ, որը նրանց ակտիվ շփումների համար ստեղծում էր առավել «բաց» պայմաններ, և խմբում թույլ էրն նրա անդամների վարքագծի ներքին վերահսկողության մեխանիզմները: Դարագատներից և բարեկամներից կազմված խմբերում, հատկապես երիտասարդների ազատ գործունեության և շփումների վրա ուժեղ էր ներքին վերահսկողությունը: Թերևս դրանով կարելի էր բացատրել հարազատներով մեկնողների խմբերում 18-29 տարեկան արտագնացների համեմատարար բարձր տոկոսը (30%), որը պայմանավորված էր նաև օտար միջավայրում «հուսալի ծեռքերում» գտնվելու սոցիալ-հոգեբանական մեխանիզմով: Բացի դրանից, ագգակցական գործոնը նախօրոք պայմանավորված աշխատավարձի չափերի վճարման հավաստիության հարցում դառնում էր կարևոր երաշխիք: Եթե խումբը բայց կացած էր նաև միևնույն ընտանիքի անդամներից, ապա յուրաքանչյուր անդամի վաստակը ընդլայնում էր ընտանիքի դրամական րութերն: Դա նպատակ էր հետապնդում լուծելու ընտանիքի առջև ծառացած մի շարք կարևոր նյութական խմբիներ:

Աղյուսակ 19

Արտագնա խմբերի կազմավորման  
սկզբունքները (%-ով)

Կազմավորման աղյուները	Տարիքային կազմոր			Ընդամենը
	18-29	30-49	50 և ավելի	
Դառագատներ	30	23	21	24,7
Բարեկամներ	19	25	31	25
Աշխատանքային ոնկերներ	7	11	8	8,7
Ծանոթներ, հաղուաններ	40	30	27	32,3
Դժվարացել են աշխատահիանել	4	11	13	9,3
Ընդամենը	100	100	100	100

Ամենացածրը աշխատանքային ընկերներից համարված խմբերն էին, որի անդամները, բավարարված չլինելով իրենց աշխատավարձի չափերից, թողել էին այն և մեկնել արտագնացության:

Միաժամանակ, դիտարկումներից պարզվել է, որ արտազնա խմբերը ձևավորվում էին տարածքային հետևյալ սկզբունքներով.

1) Ամենարարձի տոկոսը կազմել էին նույն գյուղի անդամներից բաղկացած խմբերը, որոնց միջև, բացի ազգակցական և բարեկամական կապերից, գյուղական նաև դրացիական սերտ փոխհարարերություններ:

2) Նոյն շրջանի տարրեր գյուղերից կազմավորված խմբեր, որոնք ձևավորվում էին բարեկամական, ընկերային, ծանոթության սկզբունքներով և կազմում էին համեմատարար ցածր տոկոս:

3) Տարրեր շրջանների գյուղական ընակավայրերից կազմավորված խմբեր, որոնք հիմնականում ձևավորվում էին ծանոթության սկզբունքով և կազմում էին ամենացածր տոկոսը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը քննարկված՝ առավել ընդհանուր գծերով կարող ենք առանձնացնել արտագնա խմբերի կազմավորման չորս ձևեր:

Առաջինն ընտանեկան-ազգակցական սկզբունքներով կազմված խմբերն են, որոնք կարելի է բաժանել երեք ենթատիպերի՝

ա) միևնույն ընտանիքի անդամներից.

բ) մոտ հարազատներից.

գ) հեռավոր ազգականներից:

Երրորդ՝ ընկերներից բաղկացած խմբեր:

Երրորդ՝ հարևաններից կազմված խմբեր:

Չորրորդ՝ իսարո խմբեր:

Ընդհանրապես, բարեկամ դուրս կատարել գյուղական ընտանեկան կառուցվածքի առանձնահատկությունները և գյուղական շրջաններում պահպանվող մի շարք եթիկավանդությային ձևեր:

Ի տարրերություն քաղաքային ընակչության ընտանեկան կառուցվածքի և չափերի, որի վոա իր կնիքն է թողել ուրբանիզացիան,<sup>1</sup> գյուղական ընակչության մոտ այն կրում է որոշակի առանձնահատկություններ: Վերջինս պայմանավորված է բարձր ծնելիությամբ, արտադրության մեջ կնոջ ցածր գրադաժությամբ, վաղ ամուսնություններով:

Աղյուսակ 20

ՀԽՍԴ-ում ընտանիքի միջին քավառմակը և

կազմը՝ ըստ 1950, 1970, 1979թթ.

մարդահամարների<sup>2</sup>

Տարրեր	Ընտանիքների քավառմակը (ինդիվիւդուլ)	Գույքի կազմը՝ 2-3 տարոց ճ	4-5 տարոց ճ	6 և ավելի մարդու	Ընտանիքի միջին չափերը	
					Ժամանակակից	Գույք
1959	350	108	124	118	4,5	5,1
1970	475	112	185	178	4,5	5,5
1979	609	160	266	183	4,4	5,2

Աղյուսակ 20-ից երևում է, որ քսան տարվա ընթացքում քաղաքային ընակչության ընտանիքի միջին չափերը մնացել են կայուն, իսկ գյուղական ընակչությանը նույնիսկ ավելացել է: Եթե 1959թ. ընակչության ընտանիքի միջին չափերը կազմել են 4,5, իսկ գյուղականը՝ 5,1 մարդ, ապա 1979թ.՝ համապատաս-

<sup>1</sup> Կառլետյան Է. Տ., Этнические особенности семьи. – В кн. Население Еревана, Этносоциологические исследования, Е., 1988, с. 119.

<sup>2</sup> Աղյուսակը կազմված է. Итоги Всесоюзной переписи населения 1959 г., Армянская ССР, М., 1963, с. 109; Итоги Всесоюзной переписи населения 1970 г., т. VII, М., 1974, с. 225; Итоги Всесоюзной переписи населения 1979 г., по Армянской ССР, Е., 1980, с. 319:

խանաբար 4.4 և 5.2 մարդ: Այդ տարիների ընթացքում հանրապետության ընտանիքների ընդհանուր թվաքանակում կրծատվել է ինչպես փոքր (2-3 մարդ), այնպես էլ մեծ (6 և ավելի մարդ) ընտանիքների տեսակարար կշիռը, և դրա հաշվին ավելացել է մինչև 4-5 մարդ անդամ ունեցող ընտանիքների թիվը<sup>1</sup>: Գյուղական բնակչության ընտանիքի միջին չափերի պահպաննան գործում մեծ դեր են կատարել նաև բարդ ազգակցական ընտանիքները: Եթուստիցիոնական հետագոտությունների նյութերի վերուժությունից պարզվում է, որ բարդ կառուցվածք ունեցող ընտանիքներն արտագնացների մոտ կազմել է ին 49% (տե՛ս աղ. 21): Բարդ ընտանիքների գոլությունը հայ իրականության մեջ առաջին հերթին պայմանավորված է ընտանիքի միքանի անդամների, իսկ հետագայում ամուսնացած որդիներից մեկի՝ հիմնականում փոքրի, ծնողների հետ համատեղ բնակվելու կայուն ազգային պահանջություն:

Աղյուսակ 2.1

**Արտագնացների ընտանիքի կազմը (%-ով)**

Ընտանիքի կազմը	Տարիքային կազմը			Ընդամենը
	18-29	30-49	50 և ավելի	
Ամուսին, կին	3	1	4	2,7
Ամուսին, կին, երեխաներ	52	51	41	48
Ամուսին, կին, երեխա, ամուս. հարազատ.	44	48	54	48,7
Այլ կազմ	1	-	1	0,6
Ընդամենը	100	100	100	100

Ընտանիքի այսպիսի կազմը ոչ միայն չէր խանգարում, այլև նպաստում էր նրա մեկ կամ նույնիսկ մի քանի անդամների արտագնացությանը: Դիտարկումները ցույց են տվել, որ նման ընտանիքներում աշխատունակ հասակի անդամների միջև տեղի էր ունենում աշխատանքի բաժանում: Նրանցից մեկը մնում էր տեղում՝ տան գործերը կարգավորելու և ընտանիքի առաջ ծառացած խնդիրները լուծելու համար, իսկ մյուսները մեկնում էին ար-

տագնացության: Ընտանեկան խմբերը հիմնականում ծևավորվել են նման կազմ ունեցող ընտանիքներից: Պարզ կառուցվածք ունեցող ընտանիքից արտագնացության էլ մեկնում նրա գլխավորը:

Արտագնացի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա ընտանիքի անդամները հարազատների անմիջական հսկողության կենտրոնում էին: Այդ դերն իրենց վոա էին վերցնում ինչպես ամուսնու, այնպես էլ կոնց մոտիկ հարազատները, որոնք օգնում էին տնտեսությունը վարելու, հողը մշակելու, երեխաներին խնամելու և այլ գործերում<sup>2</sup>: Գյուղական բնակչության մոտ պահպանվող ազգակցական նման փոխհարաբերությունները ամենից առաջ պայմանավորված են հայրական ընտանիքից առանձնացած հարազատներին իրենց ընտանիքի անդամ համարելու ավանդական դիրքորոշմանը:

Արան կարելի է հավելել նաև սյն հանգամանքը, որ հաճախ գյուղական բնակավայրերում հոդային ֆոնդի ռացակայության կամ հին հոդակտորին մոտ լինելու պատճառով ընտանիքից բաժանվող անդամները բնակություն են հաստատում իրենց ծնողների հարևանությամբ: Ատացվում է այնպես, որ հարևաններ են հաճախ համարվում մոտ ազգականները (տե՛ս աղ. 22):

Աղյուսակ 2.2  
**Արտագնացների հարևանների կազմը (%-ով)**

Հարևանների կազմը	Տարիքային կազմը			Ընդամենը
	18-29	30-49	50 և ավելի	
Հարազատներ, քարեկամներ	32	50	45	42,4
Պարզասես հարևաններ	38	33	41	37,3
Համաերկրացիներ	21	13	9	14,3
Ղծվարացել են ապատասխանել	9	4	5	6
Ընդամենը	100	100	100	100

<sup>2</sup> Տնային տնտեսության հոգուր կանաց ուսերին էր, որոնք հաճախ կատարում էին ծանր ֆիզիկական աշխատանք և միաժամանակ գրավվում երեխաների դաստիարակությամբ: Անշուշտ, այս րոլորու առաջ էր բերում գերհզմանածություն, որը բացասաբար էր անդրադառնում նրանց աշխատանքի արագադրողականության և առողջական վիճակի վրա:

<sup>1</sup> Карапетян С.А., Овсепян Р.Л., Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Е., 1986, с. 15.

Ըստ աղյուսակի տվյալների՝ արտագնացների 42.3%-ի շրջանում, որպես հարևաններ, հանդես են գալիս հարազատները և բարեկամները: Սա, անշուշտ, և հոգերանորեն, և ուրոյսակես խթանում է արտագնացության գործընթացին: Արդի պայմաններում ընտանիքների միջև կարևոր նշանակություն են ստանում նաև զուտ հարևանային փոխհարաբերությունները, որը արտագնացների մոտ կազմում է 37.3%: Արտագնացների հարևանների 14.3%-ը համերկրացիներ են:

Այսպիսով, արտագնացության խթանման և այդ խմբերի կազմավորման գործում ազգային առանձնահատկությունների հետ նրանց հետագա գործունեության հաջողությունները պայմանավորված են նաև «ներքին» և «արտաքին» մի շարք միջոցառումների անցկացմամբ, որոնց ծեռնամուխ էր լինում ինչպես բրիգադիրը, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամ: Մինչև արտագնացության մեկնելը խմբերի կազմավորման համար նրա անդամների ընտրությունը տեղի էր ունենում մի քանի կարևոր սկզբունքների հիման վրա: **Նախ** հաշվի էր առնվազաւ անհատի մասնագիտական պատրաստականությունը, որից կախված էին կատարվող աշխատանքի որակը և քանակը: Այն համարվում էր արտագնա խմբի գործունեության հաջողության կազմություն օղակ:

**Երկրորդ՝** կոլեկտիվի ներքին միասնությունը, որը պայմանավորված էր նրա անդամների սոցիալ-հոգերանական համատեղելիությամբ և րարոյական կերպարի անդարտությամբ, միմյանց նկատմամբ հարգանքի և վստահության առկայությամբ: Աղ ապահովելու համար խմբի յուրաքանչյուր անդամ, հատկապես բրիգադիրի կողմից, անցնում էր նախնական գննման գործընթաց՝ նրա անհատական բնավորության գծերը պարզելու համար: Այդ մոտեցումը հիմնականում հետապնդում էր մեկ նպատակ. օտար միջավայրում նրանց միջև ստեղծել դարենապաստ աշխատանքային մթնոլորտ:

Եթենուցիուգիական հետազոտությունից պարզվում է, որ նման միջոցառումը հետագայում տվել է իր դրական արդյունքները. ար-

տազնացների մեծամասնությունը՝ 67.4%-ը, բավարարված էր աշխատանքային ընկերների միջև ստեղծված հարաբերություններից (տես աղ. 23): Սա խոսում է այն մասին, որ համապատասխան օրյեկտիվ պայմանների դեպքում նման խմբերը կարող են գործել երկար ժամանակով: Շիրակի մարզի Փանիկ և Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղերում տարեց արտագնացների հետ անցկացված հարցումներից պարզվեց, որ դեռևս 60-ական թվականներին ստեղծված արտագնա խմբերը աննշան փոփոխություններով գործել են մինչև 1980-ական թվականները: Ըստ տարիքային կազմի՝ այդ հարաբերություններից առավել բավարարված էին երրորդ խմբի արտագնացների 74%-ը, որը պայմանավորված էր երկար տարիների համատես գործունեությամբ: Նման խմբերում հաճախ մշակվել են ներքրիգադային կյանքի որոշակի «օրենքներ», որոնք կոչված են ներդաշնակելու այդ հարաբերությունները: Օրինակ՝ արտագնացի ընտանիքի անդամների կամ մոտ հարազատների դժբախտության և մահվան դեպքում րոիզադի անդամները իրենց աշխատավաղձից օգնության կարգով դրամական միջոցներ էին տրամադրում ու հոգում հայրենիք վերադառնալու ճանապարհածախսը: Ներքին պայմանավորվածության համաձայն՝ նման դեպքերում այդ արտագնացին վճարում էին նաև չաշխատած օրերի դիմաց: Նույն մոտեցումն էր կիրառվում նաև արտագնացի հիվանդության ժամանակ:

**Աղյուսակ 23  
Աշխատանքային ընկերների միջև ստեղծված  
հարաբերությունների գնահատումը՝ ըստ  
տարիքային կազմի (%)-ով**

Բավարարվածության չափը	Տարիքային կազմը			Ընդհանունը
	18-29	30-49	50 և ավելի	
Բավարարված եմ	63	63	74	67,4
Բավարարված եմ ոչ լիովին	29	23	15	22,3
Բավարարված չեմ	5	11	9	8,3
Դժվարանում եմ պատասխանել	3	1	2	2
Ընդհանունը	100	100	100	100

Ղրամով հանդերձ՝ սյու խմբերում անդամների ընտրության հարցում գործում էին որոշ սկզբունքներ, որոնք հիմնականում ուղղված էին բարձրացնելու կատարվող աշխատանքի արտադրողականությունը:

Այն անձինք, որոնք ինչպես մասնագիտական, այնպես էլ բարյական առումով լավ չեն դրսևորում իրենց, դուրս են մնում այդ խմբերից: Քանի որ արտագնա խումբը, լինելով դինամիկ համակարգ, նրա յուրաքանչյուր անդամ շահագործված էի կատարվող աշխատանքի վերջնական արդյունքով՝ բարձր աշխատավարձով: Սա իրանում էի ներքրիգահային կյանքի և աշխատանքի կազմակերպման կատարելագործմանը: Անշուշտ, այստեղ կարևոր դեր էի կատարում նաև խմբի ներքին կարգապահությունը. «Աշխատանքային միգրանտների աշխատանքային տևականությունը և ինտենսիվությունը գուգակցվում են աշխատանքային խմբի բարձր կարգապահության հետ: Փորձագետները նշում են սեգոնային միգրանտների խիստ ենթարկումը բրիգադի աշխատանքների կողեւկտիվ կերպով ընդունված ներքին կարգին՝ խախտողները հեռացվում էին»<sup>1</sup>: Դիտարկումները ցույց են տալիս, որ սյու խմբերում, որոնց անդամները հարաբերություններից «րավարարված են ոչ լրիվ կերպով» կամ «բավարարված չեն», և որտեղ ցածր է աշխատանքի կարգապահությունը, ստեղծվել է անառողջ մթնոլորտ, չարաշահվել է ալկոհոլային խմիչքների օգտագործումը, որի հետևանքով հետագայում լրիվ կամ մասնակիորեն կազմալուծվել են:

**Երրորդ՝** արտագնա գործունեության հաջողությունները շատ կողմերով կախված էին նաև բրիգադիրի արդյունավետ դեկավարումից, որն արտահայտվում էի՝

ա) փաստաթրեթի ծևակերպման և համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման,

բ) շինանյութի, տեխնիկայի սպահովման,

գ) խմբի անդամների միջև աշխատանքի բաժանման և կազմակերպման,

դ) ներքրիգադային կյանքում որոշակի սկզբունքների կիրառման հարցերում:

<sup>1</sup> Шабанова М.А., указ. соч., с. 49.

Սովորաբար խմբի անդամների կողմից բրիգադիրի ընտրությունը տեղի է ունենում մի շարք սկզբունքների հիման վրա: Այստեղ հաշվի են առնվել արտագնա աշխատանքի նրա փորձը, տարիքը, մասնագիտական պատրաստվածությունը, բարյական կերպարը, ռուսաց լեզվի իմացությունը: Նրանց աշխատանքային գործունեությունում նկատելի են խմբի դեկավարման տարբեր ձևեր, որոնք հաճախ հիմնվել են խիստ համայական մեթոդների կամ էլ դեմոկրատական սկզբունքների վրա: Երբեմն հենց դրանցով է այդ խմբերի կենսունակությունը՝ նրանց իրավական ու բարյական բնութագրերը:

Կապված արտագնացության գործընթացի հետ՝ խմբի անդամների և գյուղական բնակչության կողմից բրիգադիրներին տրված րազմաթիվ անվանումները որոշակի իմաստով բնութագրում են նրանց գործունեության մի շարք կողմեր<sup>2</sup>: Օրինակ՝ 1960-ական թթ. սկսած՝ Փանիկ գյուղում առաջիններից Սիրիր արտագնացության են մեկնել Մարզարյան կարոյի և Մարտիրոսյան Գուրգենի բրիգադները: Նրանցից առաջինին հաճախ ընկերական շրջապատում կոչում էին նաև «Դելավոյ Կարո», իսկ երկրորդին՝ «Աֆերիստ»: Այդ խմբերը առանձնանում էին իրենց կայունությամբ և ամեն տարի վաստակում էին մեծ գումարներ:

Արտագնացների միջավայրում երբեմն հանդես էին գալիս նաև տարբեր տեսակի ճարպիկ բրիգադիրներ, որոնք, համատեղելով մի քանի բրիգադների աշխատանքները, ծեռք էին բերում էժան վաստակ՝ թողնելով ոչ բարի անուն<sup>3</sup>:

ԽՄԴՄ-ի մի շարք շրջաններում շինարարական աշխատանքներ կատարելու մասին արտագնա խմբերի բրիգադիրները տեղեկություններ էին հավաքում տարբեր ճանապարհներով: Երկար տարիներ միևնույն

<sup>2</sup>Տե՛ս Խահապետյան Պ., Դամառուտ տեղեկություններ Արթիկի շրջանի Փանիկ գյուղի պատմությունից 1921թ. մինչև 1983թ., ՂԱԱ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինսահութափ ազգագրության բաժնի արխիվ (այսուհետ՝ ՂԱԱ ԳԱԱ ԽԱԱ ԱԲԱ), գ. 105, տ.2. էջ 190-235:

<sup>3</sup> Ածոնց Մ.Ա., Ճաւեյն Լ.Մ. և այլն., սպառ. սուն. ս. 111.

շրջան մեկնող արտագնա խնբերը սովորաբար հաջորդ տարվա համար շրջանի ղեկավարության հետ կնքում էրն համապատասխան պայմանագրեր<sup>1</sup>: Սարուխան, Փանիկ, Գեղաշեն գյուղերում բրիգադիրների հետ անցկացրած փորձագիտական հարցումներից պարզվում է, որ դրա շնորհիվ 1-3 տարի արտագնացության մեկնող որոշ բրիգադներ առնվազն 2 տարի աշխատել են նույն վայրում, 3-6 տարի մեկնողները՝ 4 տարի, իսկ 6-10 տարի մեկնողները՝ նույնիսկ 7 տարի: Այս հարցում դրությունը այլ էր նոր կագմակերպվող արտագնա խնբերում: Բրիգադիրը նման տեղեկություններ ստանում էր երկու ճանապարհով՝

- ա) գյուղի արտագնա այլ խնբերից,
- բ) նախօրոք մեկնում էր ԽՍՀՄ-ի ազգային տարրեր շրջաններ:

Անշուշտ, երկու դեպքում էլ այն ծեռքբերելու համար նրանք ծախսել են որոշակի ժամանակ: Նկատելի է, որ տարրեր խնբեր նման տեղեկություններ միմյանց հայտնել են այն դեպքում, երբ բրիգադիրների միջև կային ազգակցական կապեր, ընկերական հարաբերություններ կամ եղել են դրացիներ: Այս փաստով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ միևնույն գյուղու և շրջանի արտագնա խնբերի որոշ մասը աշխատել է նույն մարզի տարրեր շրջաններում: Անընդհատ ընդունվում է արտագնա խնբերի ընդգրկման աշխարհագրությունը: Նրանք մեկնել են Ռուսաստանի տարրեր շրջաններ՝ Նովոսիրիկուսկի, Ամուրի, Չիտայի, Օրենբուրգի, Օմսկի, Կույբիշևի, Չելյաբինսկի, Սվերդլովսկի մարզեր, Ալթայի, Կրասնոյարսկի Պրիմորիեի, Ստավրովիլի, Կրասնոյարի Երկրամասեր, Թաթարական, Ուդմուրտական, Բաշկիրական, Յակուտական Ինքնավար Յանտարագույն համապետություններ և ԽՍՀՄ-ի ազգային մի քանի հանրապետություններ, բայց վերը նշվածը հաճախ իրենու է պայմանավորում Յայստաւա-

նից մեկնող արտագնա խնբերի ուղղվածությունը: Օրինակ՝ Սարուխան գյուղի արտագնացների 48%-ը մեկնում է Ղազախական ԽՍՀ, իսկ 21%-ը՝ Նովոսիրիկուսկի մարզ, Փանիկ գյուղի արտագնացների 50%-ը՝ Իրկուտսկի, իսկ 17%-ը՝ Չիտայի մարզ: Գեղաշեն գյուղից հիմնականում մեկնել են Օրենբուրգի և Սարատովի մարզ: Այն համապատասխանաբար կազմել է 28% և 23%: Սշխատանքային ամբողջ սեգմոնի ընթացքում տարբեր տեսակի դժվարություններ հաղթահարելու, միմյանց օգնելու համար, ոչ միայն նրանց, այլև այնտեղ աշխատող ողջ հայկական բրիգադների միջև պահպանվել են սերտ կապեր:

Սովորաբար բրիգադիրը գարնան սկզբին արտագնա աշխատանքի վայր էր մեկնում խնբի անդամներից մոտավորապես 15-20 օր առաջ՝ աշխատանքային պայմանագիր կնքելու կամ արդեն նախօրոք կնքվածի հավաստիությունը ճշտելու, ինչպես նաև շինանյութեր և տեխնիկա ծեռք բերելու և կենցաղային որոշ հարցեր լուծելու համար: Այդ գործերը ավարտելուց հետո է միայն բրիգադիրը խնբին տեղեկացրել նրանց մեկնման նախին:

Արտագնա խնբերի աշխատանքային գործունեության համար կարևոր իրավական հիմք է ծառայել Աշխատանքի պետական կոմիտեի և Խամկիս-ի 1978 թվականի մայիսի 24-ի «Արտագնա կոլտնտեսականների և այլ քաղաքացիների կողմից գյուղական վայրերում շինարարական աշխատանքների տիպային պայմանագրերի կատարման հաստատման մասին» որոշումը<sup>2</sup>: Ըստ այդ որոշման՝ գյուղական բնակավայրերում շինարարական օբյեկտներ կառուցելու համար արտագնա-կոլտնտեսականներին և քաղաքացիներին թույլատրվել է անհատական և խնբային ծևով հաճախատասխան կազմակերպությունների հետ կնքել տիպային պայմանագրեր: Այսամանակ, հանձնարարություն էր կոլտնտեսություններին և միջտնտեսային ծեռնարկություններին նրանց կատարած աշխա-

<sup>1</sup> Նման պայմանագրեր կնքելու ժամանակ ծեռնարկության ղեկավարները հաշվի են առել նրանց նախորդ տարրերին կատարած աշխատանքը, այն է՝ կառուցվող շինարարական օբյեկտների որակը, ժամկետը և այլն: Կարևոր դեռ են կատարեն նաև ծնննարկության ղեկավարության և խնբի անդամների միջև ստեղծված մարդկային հարաբերությունները:

<sup>2</sup> Об утверждении типового договора на выполнение колхозниками-отходниками и другими гражданами работ по строительству объектов в сельской местности.-Бюллетень Гос. Комитета по труду и соц. вопросам СССР, N8, 1978, с. 21-27.

տանքի համար վճարել միայն ըստ համապատասխան պայմանագրի: Նշված որոշումը, անշուշտ, այն հանգուցային օդակն էր, որը խթանում էր արտագնացությանը: Պայմանագրու կնքում էր գրավոր, որտեղ նշվում էին նաև նրանց երկողմանի իրավունքները և պարտականությունները: Համաձայն աշխատանքային օրենսդրության՝ ծեռնարկության աղմինիստրացիան կարող էր արտագնացներին աշխատանքի ընդունել միայն համապատասխան փաստաթղթի ներկայացման դեպքում, որտեղ նշված էին կոլտնտեսության դեկավարության համաձայնությունը և արտագնացության մեկնման ժամկետները: Բրիգադի յուրաքանչյուր անդամ ծևակերպում էր հրամանով, որը ներառում էր նրանց մասնագիտությունը և որակավորումը: Զեռնարկությունը պարտավորվում էր որիգաղին ապահովել անհրաժեշտ նախագծանախահաշվարկային և տեխնոլոգիական փաստաթղթերով, որը իրագործում էր շինարարության ինժեներատեխնիկական դեկավարությունը: Բրիգադին տրամադրվում էին նաև անհրաժեշտ շինանյութեր, շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, ինչպես նաև հսկողություն էր սահմանվում կատարվող շինարարության որակի վեհականությունը պետք է հոգ տաներ կենցաղա-մշակութային պայմանների, սննդի, բժշկական ծառայության և այլ հարցերի մասին:

Արտագնացներն իրենց հեղթին պարտավորվում էին շինարարական օրյեկտները կառուցել նախագծին խիստ համապատասխան շինարարական նորմերով և օրենքներով, որակի ապահովմամբ և այն հանձնել պայմանավորված ժամկետին: Նրանք ոչ միայն ենթարկվել են ծեռնարկության ներքին օրենքներին, այլև արդյունավետ օգտագործել շինարարական տեխնիկան և շինանյութը, որոնց նկատմամբ կոել են նյութական պատասխանատվություն<sup>1</sup>: Արտագնացների և համապատասխան ծեռնարկությունների միջև պայմանագրի վերաբերյալ վիճելի հարցերը

լուծվել են ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1979թ. հունիսի 29-ի որոշման համաձայն,<sup>2</sup> ինչպես նաև գործող աշխատանքային կանոնադրության սահմաններում: Թեև քննարկված որոշման մեջ մանրամասնորեն նշվում են երկու կողմերի իրավունքները և պարտականությունները, այդուհանդերձ, աշխատանքի վայրում որիգաղի առջև ծառանում էին մի շարք իւնդիրներ:

**Նախ՝** պայմանագրու կնքելուց հետո խումբը երաշխավորված չէր. որ այն մինչև վերջ կմնա ուժի մեջ, կամ էլ վճարվելու և նախահաշվարկային արժեքով նախատեսվող վարձատրության համապատասխան տոկոսը: Արտագնա խմբերի պրակտիկայում շատ էին այն դեպքեր, երբ ծեռնարկության դեկավարները հաճախ չեղալ էին հայտարարում կընքված պայմանագիրը, և արտագնացների բողոքարկումից հետո կատարած աշխատանքների դիմաց վճարվում էր ընդունված միասնական նորմերով ու գներով, Սա այն լուրջ խնդիրներից էր, որը արտագնա խմբերին լարվածության մեջ էր պահում ամբողջ սեգոնի ընթացքում<sup>3</sup>: Այս վոճակից դուրս գալու համար հաճախ նրանք դիմում էին տարբեր մեքենայությունների, հանցավոր համաձայնության գալիս տնտեսության դեկավարների հետ,<sup>4</sup> որի հետևանքով արտագնացների որոշ խմբեր հայտնվում էին օրենքի առջև<sup>5</sup>:

**Երկրորդ՝** մեջ նժվարությունների էին հանդիպում շինանյութերի և տեխնիկայի ձեռքբերման հարցում: Այսպիսի պայմաններում նախատեսվող պայմանագրային ժամկետները կատարելու համար բրիգադիրը ծավալում էր ակտիվ գործունեություն: Նրանք հաճախ այն ձեռք էին բերում անօրինական ճանապարհով՝ ինչպես մյուս բրիգադների օգնությամբ, այնպես էլ այլ շինարարական կազմա-

<sup>2</sup> О практике применения судами законодательства при разрешении споров, одной из сторон которых является колхоз или межколхозная организация от 29 июня 1979г.; Бюллетень Верховного Суда СССР. N3, 1981, с. 23; О внесении изменений в некоторые постановления Пленума Верховного Суда СССР по гражданским делам от 26 апреля 1984г., N4, 1984, с. 6.

<sup>3</sup> Войтевич С.А., Никифоров Я.Д., указ. соч., с. 142.

<sup>4</sup> Федорчук В., Неуклонно укреплять правопорядок, Коммунист, N12, 1985, с. 73.

<sup>5</sup> Советская Россия, 14.01. 1982 г.

<sup>1</sup> Там же, с. 21-27; а также см. **Богорад В.А.**, Сезонное движение рабочей силы в сельском хозяйстве. М., 1986, с. 57-73.

կերպությունների հաշվեն: Սա, անշուշտ, ագդում էր տեղական շինարարության պլանների կատարման վոա, նպաստում դեպի սեզոնային բրիգադներ տեղական կադրերի հոսունության գործընթացին, պայմաններ ստեղծում դրամական միջոցների չհիմնավորված գերածահիսերի և չարաշահումների համար: Նշված որոշման հիման վոա շինարարության րագավառում արտագնա խմբերը համարվում էին բրիգադային կապալի ներդրման սկզբնավորողներից:

Այսպիսով, արտագնա խմբերի վերաբերյալ անցկացված էթնոսոցիոլոգիական հետագութության նյութերի մանրամասն վերլուծու-

թյունից կարող ենք եգորակացնել, որ նրանց ընդհանուր ընութագրման և կազմավորման գործում կարևոր դեր են կատարել ազգային մի շարք առանձնահատկություններ: Ադ առանձնահատկությունները արտահայտվում են գյուղական րնակչության ընտանեկան կառուցվածքում և դրանում դեռևս պահպանվող էթնիկ-ավանդութային մի շարք ձևերում, որոնք խթանել են արտագնացությանը: Անշուշտ, վերը նշված գործոնները կարևոր պայման էին նաև արտագնա խմբերի տիպարանացման և դրանց հետագա կանխատեման ընթացքը որոշելու համար: